ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

«Հայրավանք երգչախումբ» խմբակ

Խմբակը գործելու է տարրական դպրոցի /2-4-րդ դասարաններ/սովորողների համար:

Խմբակին անհրաժեշտ ժամաքանակը՝ 2 ժամ:

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երգչախմբի գեղարվեստական և մանկավարժական նշանակությունն այն է , որ երեխաներին օգնի ճիշտ հասկանալ երաժշտության բնույթը, բովանդակությունը,տիրապետել անհրաժեշտ հմտություններին և արտահայտել զգացմունքները երգի,խմբերգի միջոցով:

Մանկական երգչախմբի և ուսուցչի նպատակն է խմբերգային երգեցողություն սովորեցնելը և երեխաների մեջ երաժշտության նկատմամբ սեր արթնացնելը:

Երգչախմբի օգնությամբ իրականացվում են մի շարք կարևոր հասարակական, քաղաքային և դաստիարակչական խնդիրներ:Երգի միջոցով արժևորվում է ազգային և համաշխարհային երաժշտության նկատմամբ սեր:Նպաստում է խորացնելու երեխաների սերը հայրենիքի,իր ժողովրդի ու ազգի նկատմամբ:

Նպատակները

1.Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:

2. Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:

3. Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:

3. Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:

4.Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

Վերջնարդյունքները

Ծրագրի ավարտին աշակերտը կկարողանա՝

1. Յուրացնել հայկական ժողովրդական, ժամանակակից և դասական նյութեր
2. Զարգացնել ինտոնացիոն մաքուր երգեցողություն
3. Զարգացնել երաժշտական ունակություններ
4. Կյուրացնի բազմաձայն, անսամբլային կատարման առանձնահատկությունները:
5. Ձևավորել խմբային աշխատանքի կարողություններ
6. Ձեռք բերել՝

- ձայնային դրվածք.
- շնչառություն.
- երաժշտական լսողություն.
- երաժշտական հիշողություն
- երաժշտական գրագիտություն

ՊԱՀԱՆՁՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Ունենք անհրաժեշտ նյոթատեխնիկական բազա՝«SMART» կենտրոն / դաշնամուր, սինթեզատոր էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչներ, պրոյեկտոր, / աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

.Երկերի ժողովածու ,երկրորդ հատոր։
. Խմբերգեր։Մանկական երգերի ժողովածու
. Ջուլիետա Ավագյան Зборник . Песни радио и кино.
. Հայ կոմպոզիտորների մանկական խմբերգերի ժողովածու։
. Կազմող և խմբագիր՝ Դավիթ Ղազարյան
. Зборник. Песни—Картинки .Выпуск 26.
. Եկմալյան պատարագ 1856թ. Պետերբուրգ

http://serials.flib.sci.am/openreader/Menerger%20ev%20xmberger-1979/book/content.htm
http://www.armeniaculturеam.armin.am/am/Encyclopedia_hay_mshakuyti_hanragitaran_mankakan_yerajshtutyun
https://www.youtube.com/watch?v=PYVb7sSwQtA

«ՀԱՅՐԱՎԱՆՔ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ» խմբակի ծրագիր
(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան 68 ժամ)
2-4-րդ դասարաններ

Հայրենասիրական երգեր /Օրհներգ/ *(10 ժամ)*
Նպատակը
Սովորեցնել ճիշտ կատարել հայրենասիրական երգերը:Պահպանել երգերի խրոխտ բնույթն ու տրամադրությունը:Դաստիարակել հայրենասիրություն, սեր դեպի հայրենիքը:
Խնդիրներ
Զարգացնել մաքուր հնչերանգով, հստակ ռիթմով, ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու կարողությունը:
Վերջնարդյունքներ

Կկարողանա սովորած երգերը կատարել գեղարվեստորեն՝ ռիթմական նվագակցությամբ:Կդրսևորի հարգանք ազգային արժեք հանդիսացող երգարվեստի՝ մասնավորապես օրհներգի հանդեպ:
Բովանդակություն
• Կանաչյան,,Հանրապետական օրհներգ, /3 ժամ/ • Կոմիտաս,,Հայրապետական օրհներգ /3ժամ/ • Լուսինյան,,Հիմն Հայոց լեզվին /4ժամ/

Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ *(8 ժամ)*
Նպատակը
Դաստիարակել սեր դեպի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ծանոթացնել հայ կոմպոզիտորների կինոերաժշտության հետ:Զարգացնել երաժշտությունն ունկնդրելու, վերլուծելու, երգը մաքուր հնչերանգով արտահայտիչ կատարելու կարողությունները:
Խնդիրներ
Ծանոթացնել հայ կոմպոզիտորների կյանքին և ստեղծագործական գործունեությանը,Զարգացնել երաժշտական ստեղծագործություններն ուշադիր լսելու և ինքնուրույն մեկնաբանելու կարողությունները:
Վերջնարդյունքներ
Սովորողները կդրսևորեն մշակութային արժևորման կարողություններ,կճանաչեն իրենց ազգային մշակույթը:
Բովանդակությունը
*1.*Սիրելի՛ ուսուցիչ եր.Ռ. Պետրոսյան *(4 ժամ)* *2.* Երազ իմ երկիր եր. Ռ.Ամիրխանյանի *(4 ժամ)*

Ժողովրդական ազգային երգեր *(10 ժամ)*
Նպատակը
Դաստիարակել սեր Կոմիտասի երաժշտության հանդեպ: Արժևորել Կոմիտասի ժողովրդական երգերի մշակումները: Ձևավորել ստեղծագործությունները երգելու, ունկնդրելու, տարբերելու և վերլուծելու կարողություններ և հմտություններ:
Խնդիրներ
Զարգացնել մեներգելու և խմբով երգելու կարողություններն ու հմտությունները: Ձևավորել երաժշտության բնույթի, բովանդակության, կառուցվածքի վերլուծության հմտություններ:
Վերջնարդյունքներ
Սովորողները կկարողանան սիրել և գնահատել հայկական ժողովրդական երաժշտությունը, կիմանան,թե ինչպես են հայ կոմպոզիտորները ժողովրդական երգերը մշակում, բազմաձայնում, առանձին հատվածներով օգտագործում իրենց ստեղծագործություններում:
Բովանդակություն
*1.*Աղվեսը և ճուտիկները ժողովրդական *(2 ժամ)* *2.*Ճակատդ պեծիկ եր. Դ.Ղազարյան *(2 ժամ)* *3.*Հին գալլա մշակումը՝ Կարա Մուրզայի *(3 ժամ)* *4.*Բասեն բարի ժողովրդական *(3 ժամ)*

Դասական ստեղծագործություններ *(10 ժամ)*
Նպատակը
Դաստիարակել սեր և հետաքրքրություն օպերայի և սիմֆոնիկ երաժշտության հանդեպ:Ծանոթացնել հայ և այլ ազգերի կոմպոզիտորների կյանքին և ստեղծագործություններին:
Խնդիրներ
Զարգացնել երաժշտության բնույթը, բովանդակությունը, արտահայտչական միջոցները զգալու և ինքնուրույն մեկնաբանելու կարողությունները:
Վերջնարդյունքներ
Սովորողները կիմանան կյանքի և երաժշտության միջև գոյություն

ունեցող կապը և փոխներգործությունները:
Բովանդակություն
*1.*Ունկնդրում՝ հայ և այլ ազգերի կոմպոզիտորների ստեղծագործություններ *(4 ժամ)* *2.*Սարդարապատ եր.Է.Հովհաննիսյանի *(3 ժամ)*
*3.*Լեբլեբիջիների խմբերգը Տ.Չուխաջյանի «Արշակ *2»* օպերայից *(3 ժամ)*

Հանրամատչելի երաժշտություն *(12 ժամ)*
Նպատակը
Դաստիարակել սեր դեպի ջազային և հանրամատչելի երաժշտությունը, զարգացնել ջազային երաժշտությունը ակտիվ ունկնդրելու և տարբերելու կարողությունը:
Խնդիրներ
Զարգացնել դասական և հանրամատչելի երաժշտությունը լսելու, ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու կարողությունը:
Վերջնարդյունքներ
Սովորողները կիմանան «ժամանակակից երաժշտություն»հասկացության իմաստը, կզարգանա ստեղծագործական կարողունակությունները:
Բովանդակություն
*1.*Երևանի ջուր եր. Խ.Ավետիսյանի *(4 ժամ)* *2.*Իրիկնային Երևան եր.Ա.Աճեմյանի *(4 ժամ)* *3.*Արևիկ եր. Կ.Օրբելյանի *(4 ժամ)*

Հոգևոր երաժշտություն *(10 ժամ)*
Նպատակը
Ծանոթացնել հոգևոր երաժշտության հետ:Զարգացնել հոգևոր երգերը ճիշտ կատարելու, ունկնդրելու և վերլուծելու կարողությունը:

Խնդիրները
Զարգացնել հոգևոր երգերը մաքուր հնչերանգով և արտահայտիչ կատարելու կարողությունը:
Վերջնարդյունքները
Սովորողները կիմանան երգերը բնական և հանգիստ շնչառությամբ, թեթև, նուրբ և զրնգուն ձայնով, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով կատարելու կարողությունները:
Բովանդակություն
1.Եկմալյան և Կոմիտասի ,,Պատարագների,,Ունկն /4 ժամ/ *2.սովորել հատվածներ Պատարագից/,,Սուրբ Աստված,,.,,Ամենայնի օրհնյալ Տեր,,.,,Միայն Սուրբ, Միայն Տեր,,.,,Տեր ողորմյա,,/ 6 ժամ/*

Գուսանական և աշուղական արվեստ *(8 ժամ)*
Նպատակը
Ծանոթացնել հայ աշուղնորի և գուսանների ստեղծագործություններին: Դաստիարակել սեր և հետաքրքրություն աշուղական արվեստի և ազգային նվագարանների նկատմամբ:
Խնդիրներ
Զարգացնել աշուղական երգերը ճիշտ կատարելու և վերլուծելու կարողությունը:Զարգացնել ստեղծագործելու կարողություններ:
Վերջնարդյունքներ
Սովորողները կիմանան աշուղների և գուսանների կատարողական արվեստի մասին: Կզարգանա աշուղական երգեր լսելու և կատարելու կարողություններ:
Բովանդակություն
*1.*Սայաթ-Նովա՝ ,,Արի ինձ անգաձ կալ,,.,,Քանի վուր ջան իմ,,Դուն էն հուրին իս,, *(2 ժամ)* *2.*Ձիվանի՝ ,,Ավարայրի դաշտը,,*(1 ժամ)* *3.*Շերամ՝ ,,Անդրանիկին,, *(3 ժամ)* *4.*Գուսան Աշոտ՝ Սյունյաց սարեր *(2 ժամ)*

Բովանդակություն

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ ---------- 1
ԲԱՑԱՏՐԱԳԻՐ---------- 1
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ---------- 1
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ---------- 2
ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ ---------- 2
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ ----------3
ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ----------4